Անչափահասների գործերով վերապատրաստումներ

14.11.2012 06:40

Հարգելի փաստաբաններ,

«Միջազգային բանտային բարեփոխումները» (PRI) միջազգային հասարակական կազմակերպությունը 2011 թվականից Եվրահանձնաժողովի ֆինանսավորմամբ՝ «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ-ի և Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի հետ համագործակցությամբ իրականացնում է «Անչափահասների գործերով արդարադատության իրականացման արդիական հայեցակարգերի առաջքաշումը Հայաստանում» եռամյա ծրագիրը:

Ծրագրի բաղադրիչներից մեկն անչափահասների գործերով արդարադատության ոլորտում ներգրավված անձանց վերապատրաստումն ու մասնագիտացումն է: Այդ նպատակով ս.թ. դեկտեմբերի 10-ից սկսած կազմակերպվելու են վերապատրաստման դասընթացներ դատավորների, դատախազների և փաստաբանների համար: Ընդհանուր թվով 20 փաստաբաններ մասնակցելու են երկօրյա վերապատրաստումների: Բացի նշված 20 փաստաբանների, 2-3 փաստաբաններ անցնելու են եռօրյա հատուկ վերապատրաստում փորձագետների համար և հետագայում ընդգրկվելու են որպես փորձագետներ վերը նշված ծրագրի այլ բաղադրիչների շրջանակներում:

Դասընթացներն անց են կացվելու այդ նպատակով հրավիրված միջազգային փորձագետի կողմից և տեղի են ունենալու Երևանից դուրս: Դասընթացները անցկացվելու են դատավորների և դատախազների հետ համատեղ:

Վերապատրաստումների համար կազմվել են անչափահասների գործերով արդարադատության բնագավառում գործող մեկուկես տասնյակից ավելի միջազգային (ՄԱԿ, Եվրոպայի խորհուրդ) փաստաթղթերի ժողովածու (հայերեն թարգմանությամբ), ինչպես նաև՝ անչափահասների գործերով արդարադատության տարբեր ասպեկտներին առնչվող խնդիրների ժողովածու, որոնք կտրամադրվեն վերապատրաստման մասնակիցներին:

Միջազգային բանտային բարեփոխումները և Քաղաքացիական հասարակության ինստիտուտը կհոգան մասնակիցների կեցության և փոխադրման հետ կապված բոլոր ծախսերը: Դասընթացների ավարտին մասնակիցներին կտրամադրվեն մասնակցության հավաստագրեր:

Այն փաստաբանները, ովքեր հետաքրքված են (զբաղվում են) անչափահասների վերաբերյալ գործերով կարող են գրանցվել երկօրյա վերապատրաստումներին: Տեղերը սահմանափակ են՝ 20 փաստաբան, որոնցից առնվազն 10 տեղ հատկացվելու է մարզերի փաստաբաններին: Ընտրության ժամանակ նախապատվություն է տրվելու Հայաստանի տարբեր մարզերում բնակվող փաստաբաններին:

Փորձագետների համար նախատեսված եռօրյա վերապատրաստմանը գրանցվելու են միայն 2-3 փաստաբաններ: Խնդրում ենք այս վերապատրաստմանը մասնակցելու ցանկություն ունեցող փաստաբաններին հատուկ նշել այդ մասին: Ընտրվելու են այն փաստաբանները, ովքեր բավարար գիտելիքներ և փորձ ունեն անչափահասների վերաբերյալ գործերով:

Գրանցման վերջնաժամկետն է ս.թ. նոյեմբերի 23-ը:

Մասնակցելով վերապատրաստմանը՝ յուրաքանչյուր փաստաբան հնարավորություն կստանա օգտվել 8 ժամյա, իսկ փորձագետների վերապատրաստումն անցած փաստաբանները՝ 12 ժամյա վերապատրաստումից:

Խնդրում ենք գրանցվել միայն այն դեպքում, եթե վստահ եք, որ անպայման կմասնակցեք:

Լրացուցիչ տեղեկությունների և դասընթացին գրանցվելու համար խնդրում ենք զանգահարել ՀՀ փաստաբանների պալատ հետևյալ հեռախոսահամարներով՝ 56-57-92 + 115 և կամ պատասխան նամակ ուղարկել arman_poghosian@yahoo.com էլ. հասցեին:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })